

յատկանիշն է՝ ետ չբաժնալ, նոյնիսկ ետ չնա-
խել, այլ միշտ յառաջանալ»:

Եւ անուրանալի բան է, որ թուրքերը ետ
չեն նայիր: Ետ ալ նային, առաջ ալ ուղղեն ի-
րենց աչքերը, Լազիստանը, Քիւրտիստանը եւ
Հայաստանը աշխարհագրական անուանակո-
չութիւններ են բացարձակապէս: Հայաստա-
նը մանաւանդ: Թուրքերը տեղահան ընելով եւ
բնաջինջ ընելով մեզ՝ հարցը լուծեցին ու փա-
կեցին:

Այս արիւնոտ ճշմարտութիւնը թէ եւ
բաժնի ու սարսափելի է, բայց իմաստ եւ ար-
ժէք չունի ժխտել ու բանալէճերու ենթար-
կել: Եթէ այսպէս չըլլար իրողութիւնը, քե-
մայական դրօշակներու ծածանումը չէին
պանծացներ ինկիլերի գործավարները Վանի
մէջ, այլ հայկական եռագոյնին սարսափը կը
ներշնչէին իրենց ունկնդիրներուն եւ հաւա-
տարիմներուն:

Թուրքերը իրենց գիտցած ձեւով, եւ մեզի
համար սրայմաններու ամենէն աննպաստ եղա-
նակով՝ լուծեցին հայկական հարցը: Թուր-
քիոյ արեւելեան նահանգները խիտ թէ ցանցառ
բնակչութեամբ, մի եւ անբաժան մասերը կը
կազմեն թուրքիոյ: Այնպիսի չորս ծագերուն
վրայ սփռուած 3 միլիոն հայութեան հոգին
ու սիրտը չեն որ պիտի չըջնէ իրերու պատ-
կերը: Բուն հայկական դաւանները մնացած
հատ ու կոտոր իրեակներն ալ, որ խաւածու-
թեան պատրուակին տակ կամ ալլապէս մին-
չեւ հիմա կրցեր են խեղճուկ գոյութիւն մը
քարչ տալ, հետզհետէ կ'ապաստանին Պոլիս
կամ կ'անցնին Սիւրիա: Թարմ տեղեկութիւն
մը. —

«Սերաստիայէն կը հաղորդեն մեզի, կը
գրէ «Ազդարար» (19 Յուլիս), թէ 44 հոգի
ճամբայ ելած են դէպի Պոլիս, եւ այս օրերուս
հոս կը սպասուին: Եկողներուն մէջ 25 անձ
բոլորովին ազատ են, եւ իրենց գիւղին՝
Մէնճիմէքի մէջ ուրիշներու օգնութեամբ
կ'ապրէին»:

Շատ աւելի պերճախօս ու կսկծեցուցիչ
է «Միլլիէթ» չըջուն թղթակցին Սերաստի-
այէն յղած նամակը, հայկական բեկորներուն
վիճակին ու այժմու դիմագծին վերաբեր-
եալ. —

«Պանդոկին մէջ տարիքոտ կին մը կը ծա-
ռայէ ինծի: Զկարենալով որոշել ազդութիւ-
նը, պատահական «Յաթմա հանրմ» անունը
տուի անոր: Ան ալ, ամէն կանչելուս, պու-
շն'ը (համմէ) կը պատասխանէր: Յետոյ ի-
մացայ, որ անունը Յաթմա չէ, այլ փերուզ
Տուտու: Երէկ, երբ բանալին կըլանքին մէջ
անցնելով կ'աշխատէի սենեակին դուռը բա-
նալ, փերուզ քովս եկաւ եւ ըսաւ.

«— Ա՛յ էֆէնտի, ի՞նչ կ'ընես, պիսիլ-
լահ չըսե՞ս:

«Եւ արագ—արագ պիսիլլահ կըկենելով՝
բացաւ դուռը:

Այլեւս չգիմացայ եւ հարցուցի:

«— Է՛յ կնիկ, դուն թո՞ւրք ես, թէ հայ:

«— Ի՞նչ որ կ'ուզես թող ան ըլլայ, —
պատասխանեց:

«Իրաւ ալ այդպէս: Այստեղի հայերը մի-
այն իրենց անուններով կը զանազանուին: Ար-
դէն թուրքերէնէ զատ ուրիշ լեզու չեն գիտեր,
եւ թուրքերէնն ալ Սերաստիայի տեղացիներէն
տարբեր չեն խօսիր»:

Ասիկա թրքացում չէ, հապա ի՞նչ է: Հա-
յերու սիրտն ու հոգին կրնա՞ն զօրել իրենց
պատմական հայրենիքը ազատելու, որպէսզի
մեր սեւաբախտ պատասիկները ոչ պուշն'ը
սրտան եւ ոչ ալ պիսիլլահ թոթովեն:

Մինչեւ այն օրը՝ որ մենք ազգովին ի վի-
նակի չըլլանք քուրքերուն ըսելու, քէ իրենց
կառավարած երկրին սա կամ նա նահանգները
մե՛րն են եւ ոչ իրենցը, մինչեւ այդ օրը Հա-
յաստանը քուրքիս է եւ հայկական հարցը
քուրքերու ձեռքով լուծուած—վերջացած:

Մնացեալը ճառ ու բառ է, եւ չունի ոչ մէկ
չահեկանութիւն, որքան ալ որ որդեր ու փը-
տուցիչ սաղմեր փնտռենք Քեմալի հայրենիքին
մէջ՝ մեր հարուստ եւ խաւար երեւակայու-
թեամբ:

Մեր պարագան Մակեդոնիոյ, Ալբանիոյ,
Արաբիոյ եւ այլոց հետ չփոթելու մեղքը նե-
րելի չէ:

Այս երկիրները երբեք չգատարկուեցան
իրենց բնիկ ժողովուրդներէն, եւ այս էր որ
երջանիկ ըրաւ զիրենք: Չապրող, չչնչող կամ
բնաջնջուող ու տարագրուող հայութիւնը ինչ-
պէ՞ս բաղդատել ուրիշ ժողովուրդներու հետ: